ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/18/2021

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 28 սեպտեմբերի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Լ. Ալեքսանյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի սեպտեմբերի 28-ին, քննելով հայտարարատու պաշտոնատար անձ Արմենուհի Բաղիրյանի ընտանիքի անդամ Հայկ Ալումյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու փաստի առթիվ 2021 թվականի սեպտեմբերի 2-ին հարուցված թիվ ՎԻՎ/18/21 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ հայտարարատու պաշտոնատար անձ Արմենուհի Բաղիրյանի ընտանիքի անդամ Հայկ Ալումյանի 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հայկ Ալումյանը հանդիսանում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ հայտարարատու պաշտոնատար անձ, Արմենուհի Բաղիրյանի ընտանիքի անդամը՝ ամուսինը: Վերջինս, սակայն, «Հանրային ծառայության մասին» օրենքի

36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը:

1.3 Հանձնաժողովի կողմից 2021 թվականի հունիսի 29-ին Հայկ Ալումյանին գրավոր ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը:

Նշված ծանուցումը Հայկ Ալումյանի կողմից ստացվել է 2021 թվականի հուլիսի 1-ին: Սակայն, գրավոր ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը վերջինիս կողմից չի ներկայացվել Հանձնաժողով:

1.4 Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 11-ի թիվ 01/630-2021 գրությամբ Հայկ Ալումյանը սեպտեմբերի 2-ին ժամը 15:00-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը: Վերջինս նշված օրը և ժամին ներկայացել է Հանձնաժողով:

1.5 Հայկ Ալումյանի մասնակցությամբ 2021 թվականի սեպտեմբերի 2-ին կազմվել է թիվ ՎԻՎ/18/2021 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշով, որի մեկ օրինակը առձեռն հանձնվել է վերջինիս:

1.6 Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/18/2021 գործի վարույթը: Վարույթ հարուցելու մասին որոշումը, այդ թվում՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին ծանուցումը, ուղարկվել են Հայկ Ալումյանին:

1.7 2021 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը 12:00-ին պատշաճ ծանուցված Հայկ Ալումյանի բացակայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Հայկ Ալումյանի մասնակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ վերջինս բացատրություն է ներկայացրել առ այն, որ համաձայն չէ արձանագրված խախտման հետ և կներկայացնի գրավոր բացատրություններ, Հանձնաժողովում, սակայն, չեն ստացվել վերջինիս գրավոր բացատրությունները, ինչպես նաև առկա չէ գրավոր միջնորդություն գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/18/21 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ հայտարարատու պաշտոնատար անձ Արմենուհի Բադիրյանի ընտանիքի անդամ՝ ամուսին, Հայկ Ալումյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, որոնցում նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն ներառված են նաև առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 8-րդ մասով սահմանված է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամների հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը, իսկ 9-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ (ընտանիքի կազմի մեջ մտնող անձ) է հանդիսանում նաև նրա ամուսինը: Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով կանոնակարգված են հայտարարագրեր ներկայացնելու ժամկետները (տարեկան հայտարարագրի պարագայում՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը):

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված ***հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը*** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, առկա չէ նաև Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2020 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Հայկ Ալումյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 ՀՀ դրամի չափով:***
2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Ալումյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

31